

Հայրենասակրութեամբ պատուղն ու ար-  
դիւնքը չերենային վրան :

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յաշակո էսէտիր և նախագաղակար Շի-  
նահի գրացն Դատաստանի Անիթարաց  
Պաշի :

Պատուսաւագութն ինձ 'ի նախ-  
նեացն յիշատակս և 'ի թանգարական  
հնութիւնս այնոքիկ, ոյք զձեռին ճար-  
տարի բերեն զինիք երկասիրութեան,  
և այնքան ևս ընտիրք՝ որքան ձեռնն  
ճարտարագոյն և վաստակն տաժանա-  
կան և մանր, և գործն ազնիւ : Խնդի-  
տանայ և ոչ ոք՝ քանի մեծարանս և զին  
ընծայեն հանդիսարանք հնութեանց՝  
դրամոց նախնեաց, և ականց պատուա-  
կանաց և դրոշմագիծ քարանց և այլոց  
սոցին նմանեաց . ընդ որս դասակցեալ  
և ձեռնագիր մատեանք, մանաւանդ  
մագաղաթեայքն, ոչ նուաստագոյն ինչ  
աթոռ ունին 'ի հնահոյլ կաձառուն .  
նա մանաւանդ պատուականութեամբ  
աննիւթականն սոփերացն զոր յին-  
քեանս պարփակեն՝ զբազմօք զայլովք  
նիւթովք կամ թէ զյոլովիւք իսկ գե-  
րազանցեն . և թէ ոչ այս այսպէս ճա-  
նացի յամենեցուն՝ տպագրութեանն ար-  
գատիք է կարծիսդ, որ զբնագրացն  
բազմացուցանելով զօրինակս՝ զառան-  
ձնակութեան նոցին խորել թուի ըզ-  
փառս : Դերագոյնք 'ի գրաւոր հնու-  
թիւնս՝ կամ հոյակապ արանց երկասի-  
րութիւնքն են, կամ սակաւագիւտ գը-  
րուած, կամ կարի քաջ հին, կամ ճար-  
տարագիծ գըչութիւն, կամ քաջանշան  
առն ձեռաց վաստակ, որ վեհ քան  
զայլն է . և քան զսա վեհագոյն՝ թէ  
իցէ մատեան խակագիր կամ նախագա-  
ղափար բանիցն հեղինակի, որ քանոն  
և ուղղիչ կարգի հանուրց առ 'ի նմանէ  
փոխանցելոց օրինակաց :

Այսեն այսպիսեացս մատենից ժան-  
գահար հնութիւնք տիգրանեան դրա-

մոց, չիցեն ակնախտիղն պաղպաղմունք  
թագազարդ գոհարաց, և ոչ ճոխու-  
թիւնք և պէսպիսութիւնք անօթոց ոս-  
կեղինաց և արծաթեղինաց, և ոչ վսե-  
մական արհաւիրք զինուց, կամ տիեզե-  
րասաստ գաւազանաց փառք . այլ մտա-  
ւորականն չնորհիւ քաջ 'ի բաց զարքու-  
նական յիշատակօքն անդր անցանեն .  
քանզի նոքա զմեծազարմիցն զանուն և  
զժամանակ միայն կրեն, այլ զվաստակ  
ապարդիւն կամ սինլքոր՝ կամ թերեւ  
և չարաշուք մարդկան . իսկ սոքա զվե-  
հագունից 'ի մարդիկ, զիմաստնոց ա-  
սեմարանց, և զձեռին վաստակ և զմր-  
տաց ծնունդ՝ ամրնդմիջաբար բարձեալ  
բերեն . չ) նունդք արդարեւ վեհազունք,  
և զժուարինք յերկունս, որպէս զի բա-  
զում անգամ ծնողացն՝ որպէս մարց ո-  
մանց կենսազրաւս լինել, արտադրեալք  
անթերի կամ թերակազմ յանմահու-  
թիւն անուանց այնոցիկ՝ յորոց ինքեանք  
անմահ կառուցան արձանք յերկրի :  
Ազքա են անձուկ ասպարեզք մեծամեծ  
նահատակութեանց մնաց վերացելոց .  
յոր ժամն ձիգս ծանրանալով կարկա-  
ռեալ զդէմն անքթիթս՝ բոյսս իմաստից  
սերմանէին 'ի դաշտոն սպիտակս, մինչ-  
դեռ սիրտ և գլուխ միաբանք տարժա-  
նէին և ոգիք հեղինակին քաղէին, յու-  
նիցն կամար միալուծ շեշտեալ 'ի վեր և  
ճակատն ակօսաձեւ ամփոփեալ իջեալ 'ի  
կցուածս նոցին, և ամենայն զօրութիւն  
խելապատակին թուեր սեղմել անդր  
հաւաքել . եղէզն դանդաշկոտ յաջում  
վայրահակ նկատելով՝ մերթ որպէս ե-  
րիվար հմուտ սուրայր 'ի վսեմական  
ասպարի զին, և մերթ տաժանաքայլ  
հազիւ հազիւ ձռնչելով յառաջէր . ա-  
հեակն հարեալ ընդ ճակատն՝ թուեր  
իմն մալել զկարծրութիւն ամանոյ ուղ-  
ղոցն և ծննդաբերս գործել . մինչեռ  
և քիրտն ջերմաջերմ ընդ սեադեղոցն  
արբուցանէր զտոմնն : Եւ ուր ուրեմն  
'ի վեր առեալ հեղինակին զգլուխն՝  
գտանէր զմեծ ժամս աւուրն կարծա-  
տեալ և անսովոր երագութեամբ սլա-  
ցեալ . բայց նա առաւել ընդ վաստակն  
իւր մնայուն խնդացեալ քան ընդ ժա-

մանակն խուսափուկ , հանդես ուրա-  
խութեան կատարէր 'ի սրտի իւրում ,  
և թերես սիրացեալ ընդ իւր իսկ ա-  
րարմն՝ վկայէր ընդ արարչապետին թէ  
բարի է , և զհաճութեանն նշանակ՝  
զդրում համբուրի շրթանց կամ զփա-  
րումն տամկացեալ արտեւանանց տայր  
'ի քարտն ուր զմիտսն տառատպեաց :  
Եւ այսպէս յաձախ արարեալ՝ յամբոկ  
գործոյն ժամանելով , քանի ուրախու-  
թեամբ այնուհետեւ ընոյր սիրտն , և  
որքան հրճուանօք գգուեր 'ի գիրկսն  
զիւրոց մտաց ծնունդս , իրեւ զորդեակ  
բազում սիրոց և դժուարածին ծոցոց  
ընծայեալ 'ի լրս , ամենեին զծնողին  
բերելով զնմանութիւն :

Ի յսպիսեաց ասեմ մատենից հան-  
դիպեալ ուրուք , զիարդ ոչ սիրանայցէ ,  
և ընդ քաջապսակին մերոց Ա աղարշա-  
կայ ոչ հրամայիցէ առաջին իւրոց գան-  
ձուց զայն լինել , և որպիսի գիրկս արկ-  
ցէ նոցին՝ իրդու այն թէ բուն իսկ օրի-  
նակագրացն և բանին ծնողաց՝ յարու-  
ցելոց 'ի բազմադարեան քնոյ գերեզմա-  
նի , պատահումն մեծ և սքանչելի , սա-  
կայն դժուարին և յանկարծադիպ . զի  
հնագիր մատեանք բազում են բազում  
ուրեք , այլ իսկագիրք ձեռին հեղե-  
նակին և առաջին ընկալուքք մտացն  
ծննդեան՝ դուն և դուն ուրեք դտա-  
նին , մանաւանդ քաջացն հնոց օրինա-  
կագրաց :

Հասեալ և իմ 'ի վերայ հարազա-  
տութեան միոյ յայսպիսեաց անզուգա-  
կան մատենից , կամիմ բանասիրացդ ա-  
ռաջի առնել մուրացածոյ նշմարաւ սեւա-  
կիս . զմատեանն պատուական որ 664  
ամօք հնութեան յանդիման առնէ մեզ  
և զիմիտս և զձեռս և զնոյն ինքն համօ-  
րէն զմեծ Ա արդապետն զլիսիթար  
Պաշ , իւրոյին՝ ձեռնագիր զրովքն դա-  
տաստանաց , որոյ շարագրութեամբ  
փառս մեծագոյնս նա անձինն ստացաւ  
և շուք պարծանաց հայկեանս դպրու-  
թեան : Ա ետէ ընծայեցաւ այս սովիեր 'ի դա-  
րանս հնագիր մատենից մենաստանիս ,  
նուեր ազնիւ Ա ցնուի առն և անուամբ

և տոհմիւ և վարուք \* . որում՝ ընդ  
կրկնելոց և աստուստ շնորհակալու-  
թեանց՝ ձօնեմք զծանօթութիւն պա-  
տուականութեան նուիրին իւրոյ , և  
զաեղի փառաւոր զանուան իւրոյ ընդ  
այլոցն մերոց բարերարաց , զորոց յիշա-  
տակս կենդանեաւյար 'ի սրտի կրեմք ,  
և ապագայիցն մերոց աւանդեմք յա-  
նեղծ դրուագս :

Ա ինչը բուռն հարեալ յապացու-  
ցութիւն իննորոյս , նշանակեսցուք հա-  
կիրք զնիւթական հանգամանս մատե-  
նին . որոյ է չափ երկայնութեան 20 և  
կէս հարիւրաչափ գաղղիական , լայնու-  
թիւն 13 և կէս , թանձրութիւն՝ 7 .  
Էջս ունելով 630 ( թուղթ 315 ) . բամ-  
բակեայ է թուղթն , գեղնեալ ժամա-  
նակի հնութեամբ և մանաւանդ ձեռն-  
ածութեամբ , յետին թուղթքն միայն  
մաշեալ և խանգարեալ 'ի խոնաւէ , և  
երկուստեք մատենին թուղթք անկեալ  
են , յառաջոյ՝ ինն թուղթ , որով և թե-  
րի է սկիզբն գրոցն , այլ պակասորդն  
համեմատութեամբ այլոց օրինակաց  
ձանացի յեօթն թուղթս կամ թէ 'ի 15  
Էջս բովանդակիլ , որով և մնացեալքն  
2 կամ 3 էջք՝ այլ ինչ բան ունէին ,  
թերեւ ընծայական ինչ առ Ա ախտանգ  
խացենոյ իշխան՝ որումնուիրեալ է մա-  
տեանն և նորին վասն յօրինեալ . իսկ 'ի  
վերջոյ ոչ է յայտ որչափ ինչ պակասէ .  
քանզի յաւարտ Ա ատաստանագրոցն  
յարեալ է զշարս հայրապետացն Ա  
զուանից , և յետ 20 թղթոյ պակասի  
պատմութիւնն , ոչ ժամանեալ յիւր  
ժամանակս , զորոյ զդէպմն անշուշտ Ճո-  
խագոյն գրեալ էր . վասն որոյ թուի  
թէ ոչ սակաւ թուղթք անկեալ են 'ի  
յետուստ . թերթք թղթոցն թան-  
ձունք են , և թանաքն զեղնեալ , բայց  
զիծք եղծեալ բանից սրբագրելոց՝ կարի  
քաջաթուկս վասն հոծեալ մելանին :  
Տառքն բոլորագիր են հնաձեք , և մե-  
ծութեամբ՝ իրեւ կրկինս տառից օրա-  
գրիս , թէպէտ և վերնագիրք զլսոցն  
մանունք են քան զհատարակի զրոցն .

\* Ազնուորեան Միքայել Ազայ :

կայ և տող մի վերնագրի նշանաւոր ձեռվ, շղագիր կամ շուտագիր ժամանակին, նման արդարեւ մերոյս շղագրի, ունելով և զհնութեանն տիպս. և լուծանէ զտարակոյս բանասիրաց՝ թէ գոյր և նախնեաց Ճեպով գրութեան տառք։ Ունի և երկաթագիր գրուածս ընծայական բանից կրկնատեսակ ձեռվ և մեծութեամբ։ Վերականական է գըրուածն քաջ տրոհութեամբք և ուղղութեամբք և առողանութեամբ. բայց գիրն խոչըր որպէս և նիւթն, զորմէ և ինքն մատենագիրն ամբաստան լինի ՚ի ժԱ. գլ. նախազրութեանցն, “ լու զան առ տեղեկութիւն գրչութեան . . . լու զպակասութիւն գործեաց զըճագրութեանն, . . . և ուրեք արտաքոյ բանին ՚ի ստորմն լուսանցից գրէ, “ Ա ատութիւնն յինէն է, այլ առաւելն ՚ի նիւթէս է. աղաչեմ չպարաւել զվատս, . . . Վայ չափ վասն արտաքին կերպարանաց մատենիս. ժամ է արդ գալ ՚ի ցոյց բնագիր հարազատութեան նորա։

(Օ) Հաւաստիս իրացս ընծայեն մեզ և մատեանն առանձինն, և բաղդատութիւն ընդ նմա այլոց օրինակաց, որ են առ մեզ թուով վեց, երեքն հնագոյն 500 ամօք որ աւելի որ պակաս. և որ ՚ի նոսա հնագոյնն է՝ քաջ համաձայն է քնագրիս մերոյ և ՚ի բանս և ՚ի տրոհմունս գլխոց, զոր ումանք յօրինակաց այլաձեալ են, և ուրեք ուրեք զեղեալ զբանս, և զՄ ծԱ գլուխսն ամիտոփեալ ՚ի ՃՃԳ։

Ա. Գիրք դատաստանացս յօրինեցան ՚ի ՈՒԳ (1184) թուականիս Հայոց ՚ի իննզրոյ Ա ախտանգայ իշխանաց իշխանի կաչենայ, ևս և Ատեփանոսի Վ զուանից կաթուղիկոսի ։ արդ ունի մերս օրինակ ընծայականս առ նոյն ինքն Ա ախտանգ, զոր ոչ մի այլ օրինակ ունի. և են այսպիսի. առաջինն յաւարտ գրոցն մեծ երկաթագրով։ “ Ք ՏՍՈՒՍ Վ Ր Ւ Ա, ՏՈՍ ՅՈՒՐ ԺԱՄ ԴԱՍ Ի ՆՈՐՈԳԵԼ ԶԵՐ, ԿԻՐ, ՆՈՐՈԳԵՍ ՀՈԳԻՌՈՎ, ԵՒ ՄԱՐ, ՄՆՈՎ, ԶԱՍՏՈՒԱԾԱՍՍԵՐ ԻՇԽԱՆՆ

1 ՏԵ՛ յերես 41 օրագրի տարւոյս։

,, ԻՇԽԱՆԱՑ ԶԱ ԱԽՏԱՆԳ ԵՒ ԶԱ, ՄՈՒՄՏԱՆ ԻՒՐ ԶՈՐՁՈՒ ԽԱԹՈՒՆՆ, Ի ԿԵՍԱՆ ԱՆՄԱՀՍ : ԼՈՒ Ի ՆԵՐ, ԿԱՅԻՍ, ԱՌԱՆՑ ՓՈՐՁԱՆԱՑ ՊԱ, ՀԵՍՑԵՍ ԶԱՏԱԿԱՒՔ ՀԱՆԴԵՐՁ, ԵՒ ԱՄԵՆԱՑՆ ԲՆՏԱՆԵՒՔ : ԼՈՒ ԲԱ, ԶՈՒՄ ԵՒ ԱՌԱՏ ՈՂԱՐՄՈՒԹԵԱՄԲ, ՔՈ ՈՂՈՐՄԵՍՑԻՍ ՆՆՁԵՑԵԼՈՑ ՆՈ, ՑԱՑ ԱՄԵՆ ԵՒ ՏԱՌԱՊԵԱԼ, ԳՐՁԻՍ, ՈՂՈՐՄԵԱՆ ՎՐԴԱՏՈՍ Լ ԽՏՈՒԱՆ, ԱՄԵՆ, . . . : ԼՅԿՐՈՐԴ յիշատակարանն կայ ՚ի կատարածնախազրութեցն, մանր երկաթագրով, և է այսպէս։ “ ՏԵՐ, Լ ԽՏՈՒԱՆ ՎԱՑԵԼԵԼ, ՏԱՑԷ ԱՍ, ՏՈՒԱԾԱՍԵՐ ԵՒ ԲԱՐԵՊԱԾՏ ԻՇԽԱՆԱՑ, ԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԵՒՆ ՎԱԽՏԱՆԿԱՑ, ՈՐԴԻՌՈՑ ՀԱՍԱՆԱ Ի ԿԱՄՍ ԻՒՐ, ԶԳԻՐՔՍ ԴԱՏԱՍՏԱՆՏԱՆՍԻԱԼՈՒԴ, ՂՈՒԹԵԱՄԲ ՎԱՐԵԼ, ԶՊԱՏՈՒԹԻՒՆ, ՍՈՐԻՆ, . . . : Խակ երրորդն որ բացայաժագոյն ևս առնէ զցոյց իննզրոյս, զի ոչ ՚ի կարգի իջիցն կայ, այլ ստորև ՚ի լուսանցմն բոլորգրով, և այս . . . ՎՐԻՍ, տոս Լ ԽՏՈՒԱԾ, զքո հայրենի ժամանգութիղ՝ տացես վայելել Ա ախտանգա, իշխանաց իշխանի ամեն, . . . Վայ յիշատակարանք կամ ընծայականք միայն բաւականք էին ՚ի ստուգութիւն բանիս առաջարկելոց, որպէս կարծեմ. այլ ՚ի Ճոխութիւն փաստից յաւելցուք և զայլ։

Բ. Օ ՀԵՄ ՎԵՐԾՆՈՅ ընծայականին յաւարտ գրոցն, զոր աստ առաջին կարգեցաք, կայ բուն յիշատակարան մատենին և մատենագրին, կնիք գրոցս դատաստանի, և սկիզբն այլոյ զրոց հեղինակին, զոր և զսա դարձեալ չունին այլ օրինակք. և է այսպէս։ “ Փառք փրկչին մերոյ Ք իշուսի, ընդ նմին Հաւը և հոգւոյն, որ ետ զգադարձումն աստանաւը տալ գրոցս դատաստանի, զի թէ և յառաջագոյն աստանաւք գրելով զսակաւ յիշատակարանն եթէ աւարտումն սորա ոչ է : Աա, կայն այժմ մեք հանգուցանել կամեաք. գրելով ըստ կարի, ոչ խափանել զայլոց ողք կամին գրել և յաւելուլ։ Լու թէպէտ յամի յորում սկր

“ սաք գրեցաք զեղեալ չափա զատաս  
“ տանի : Այսկայն յաղագս հալածա-  
“ նաց որ եհաս մեզ, ընտանի, և ոչ  
“ աւտար, յապաղեաց գրել զիշա-  
“ տակս զայսոսիկ : Բայց համարեցաք  
“ և զայս ևս հարկաւոր լինել զի զշար  
“ կարգի հայրապետացն դիցուք զի  
“ զուանից . զի և յայնոսիկ յամենն-  
“ սեանն զսոսա որ այժմ ունին յարմա-  
“ րեսցուք ., և այն : Հաւելեալ զչետ  
բանիցս զպատճառա գրութեան պատ-  
մութեան՝ կարգէ վերնազիր . “ Ը արք  
“ հայրապետացն Լզուանից, որք կա-  
“ ցին զկնի սրբոյն Լզիշայի որ եկնյլը-  
“ բուսաղեմէ ., և սկսանի . Ա. Առուբըն  
Ը ուփիսաղից , և այն : Լրդ եթէ այ-  
լա ուրուք եր գրեալ զայս Յիշատակա-  
րան, յաւելոյր ապաքէն ՚ի գլուխ Ը ա-  
րուտ հայրապետացս ասել, Արքն ՈՒթ-  
եարայ, և այն : Յայսմանէ հաւաստի  
զի և այլ հակիրձ յիշելեաց գրուածք՝  
որպէս ՚ի միոյ գրչէ ելեալ են, նոյնպէս  
և ՚ի հեղինակէ գրոցն . որպիսիք են  
յէջ 466 . “ Օ անպիտանս յամեննայնի  
զրիչս յիշմանն արժանացոյ ., . ՚ի 444 .  
“ Վրիստոս Լտուած ողորմեա ստա-  
“ ցողի գրոցս, և գրողի, ՚ի գալստեան  
“ քում . ամեն ., . յ376 . “ Օ զրիչ  
“ գծիս և զարարիչ դատաստանացս և  
“ զստացող սուրբ կտօսիկս, յիշել աղա-  
“ չեմ ., : Լոյլովք հանգերձ, որք որ-  
պէս ասացաք՝ յար և նման են զրչութե-  
մատենին, որով զրեալ են և այլ ևս օ-  
տար հարևանցի բանք, զօր ոչ իշխեր  
զրել թէ այլ ոք եր որ գրերն և այլ ոք  
որ թելազրէք . զօր օրինակ . “ Ուր-  
“ դասպան քուն . . . Լւաղ զդատա-  
“ պարտեալս . . . Քունս սպան անբա-  
“ րեխօս . . . Ո՚ի մեղազրէք . անմը-  
“ տութիւնս տայր առնել և տրտմու-  
“ թիւնս . . . ( Ծրհնութիւն քեզ Վր-  
“ րիստոս, որ ոչ կապեալ եմ՚ի կին,  
“ ոչ արձակեմ ., . և այլք այսպիսիք :

Գ. Տիրագոյն ևս հաւաստիք ձեռին  
Ոխիթարայ լինելոյ զրչութեան և այսց  
բանից և համօրէն գրոցն, այս է, զի  
: Զայս ՚ի ներքոյ գլխոյն վասն արձակմոն կա-  
նանց գրէ :

Համանման են և սառք սրբազրութեցն  
կամ լաւագոյն ասել փոխազրութեանց,  
որ նորին հեղինակին են, և անժիստելի  
փաստս ընծայեն նախագաղափար լինե-  
լոյ օրինակիս այսմ՝ զրոցն դատաստա-  
նի : Եւ նախ այնու՝ զի յաձախ են վե-  
րագարձութիւնքս, և ամենազգի, այս-  
ինքն զեղումն, յաւելուած, փոփոխու-  
թիւն իմաստից, փոփոխութիւն քերա-  
կանական, վերնազրութիւնք, ’ի լու-  
սանցս գրութիւնք, ջնջագիլք, և այն .  
որպիսիս առաւել քան զ200 թուեալ  
է իմը լինդ մեծ և լինդ փոքր . և որոց ան-  
ցեալ իցէ լինդ հին զրչագիրս, մանա-  
ւանդ լինդ այսպիսի ընտիր գրուածս,  
ոչ բնաւ կասկածէ՝ թէ չիցեն այսոքիկ  
վերագարձութիւնքս հեղինակի բանին  
և ոչ մոռացօնք կամ սխոլանք, զօր և  
ոչ առ կարի մոռացամիտս ՚ի գրչաց  
գտցէ : Դարձեալ, այլ ամենայն օրի-  
նակք՝ զրեա թէ յամենայնի հետեւեալ  
են սրբազրելոցս բանից, և ոչ ջնջելոցն՝  
որոց հետք երեխն ուրեք և վերծանին,  
և յայտնապէս ձանացն զի կամաւ փո-  
փոխեալ է բանն և ոչ գրչի վրիպեալ :  
Եւ դարձեալ, ուրեք ուրեք համաձայն  
գտանին այլ ամենայն օրինակք, իսկ  
մերս միայն այլաձայն : Օ այսր ամե-  
նայնի կարգեսցուք ՚ի յոլովից՝ սակաւ  
օրինակս :

Դ. Փոխազրութիւնք ինչ վերագար-  
ձութեամք ՚ի բնազրին : Ի ժԱ գլ.  
“ Ախիսազրութեցն գրեալ նախս, “ Ինդ  
“ ստեամք ախտաժետ զմանկունս ու  
“ նիմ բանի . . . փոխազրեալ է զկնի .  
“ Ինդ ստեամք ախտաժետիւ զմանկունս  
“ ունեի բանի . . . և այսմ հետեւի ըն-  
տիր օրինակ մեր : Լինդ . Ուրբենա գը-  
րեալ ապա փոխազրեալ է Ուրբենի : —  
յԲ գլ. նախսազրութեանցն, “ Օ ար-  
“ մացայ թէ զիանրդ յառաջնոց ամենէ-  
“ ցուն . . . և այն . փոխազրէ, “ Օ ար-  
“ մացեալ յաղագս այնորիկ լինէի թէ  
“ զիանրդ . . . և այն : — յՀ գլ. Ախսա-  
զրութեանցն . “ Ճ՛մարիտ տեսանելն՝  
“ քան զլսելն է . . . փոխազրէ, “ Ճ՛րշ-  
“ մարիտ տեսանել քան զլվեալն է . . .  
— յԲ գլ. Դատաստանայն . “ Ապա

„ թէ անձնատուրք լեալք՝ յայլմն հար-  
կիցին այլ մի ’ի գլուխս „ . փոխեալ ,  
“ Իպա թէ անձնատուրք լիցին՝ յայլմն  
հարկիցին , և այն : — յԴ գլ . սկսեալ  
զրել , “ Բստ սահմանի , եղծեալ զըս-  
կիզբն բառին և գրեալ է ” Բստ հրամա-  
նի , : — յԸ գլ . Կախադրութեանցն  
զբանն “ Տակաւին ըստ օրինաց է և  
“ Իքրահամուն , , երիցս գրեալ է ,  
տեղափոխելով զկարդ բանին , և տողս  
ինչ եղծանելով , երկիցս ’ի լուսանցս և  
’ի ստորե գրեալ : Բստ այսմ և այլք :  
Ե . Հաւելուածք՝ ’ի նախագրեալմն :  
Ի վերջ Մէ գլխոյ , “ Օ սոյն սաստ զը-  
նեն և գեղջ աւագաց . հանդերձնզո-  
ւ վլւք , , յաւելու , “ թէ փակել տայ-  
ցեն զեկեղեցիս , . այլ օրինակին չու-  
նին զայս յաւելուածս : — Կրյնպէս ’ի  
Մէ գլ . զհետ բանին “ Օ կէս չնորհին  
“ կալցի յաղագս ձեռնադրութեանն , ,  
յաւելու , “ յիւր կենդանութեանն , .  
և զայս ևս յաւելուած չունին այլ օրի-  
նակք :

Օ յոլովս յայլոց յաւելուածոց և փո-  
խագրութեանց հաւասար բնագրիս ու-  
նին և այլքն , յորմէ յայտ այսպէս լինի ,  
թէ ոչ միանգամ այլ և յետ ժամանա-  
կաց վերագարձեալ հեղինակին ’ի բան-  
սրն՝ արար զյաւելուածսդ զոր նշանա-  
կեցաք , մինչ յառաջ քան զայն առեալ  
էր այլոց զզաղափար գրոցն . և թէպէտ  
վասն Ա ախտանգայ իշխանի գրեալ էր  
զայս , այլ մնաց առ ինքն , որպէս և ’ի  
յիշատակարանին բանից է գուշակել .  
կամ թէ այլ գեղեցկագիր տուեալ օրի-  
նակել ընծայեաց նմա . որ զիարդ և է՝  
մնայ մերս միշտ նախօրինակ :

Զ . Ա եպհական ընթերցուածք մե-  
րոյս , և այլոցն արտուղութիւնք , յորմէ  
ուրեք և վրիպել նոցա յիմաստս : Ա Զ  
գլ . Կախադրութեանց ասէ մերս .  
“ Օ նընելով լինի իրք դատաստանաց , .  
իսկ երեք յայլոց օրինակաց մերոց գրեն  
վիճակն , և այլ երեքն՝ Արքելու : —  
Լինդ . “ Հարթ և արդակ պահել զի-  
ւաւացին , . այլքն թուի թէ սիսալ  
կարծելով զրեն Հարթ և արդար : — Ա  
Մին թէ գլ . “ Հատանի կապ միջոցին եր-

“ կուց վտառացն „ . մի օրինակ միայն  
այսպէս ուղիղ գրէ . այլքն զկապն գրեն  
էամ , “ Հատանի կամ միջոցի երկուց վը-  
տակացն ( կամ ) վտառանացն : — յԲ  
գլ . դատաստանացն . “ Լովու լըտրեղն  
“ միայն լիցի , . մի օրին . լուր է-դի ,  
այլքն այլազգ չափս գրեն բացատրութք :  
— Լինդ . “ Ծուգանն ըստ կարի լիցի , .  
“ այլքն առուգանն : — յԸ գլ . Վատ-  
նիցի ’ի գերութիւն , . այլքն Հարիցի :  
Եւ զանց զայլովքն արարեալ՝ յիշես-  
ցուք և զերիս զայսոսիկ յոյժ նշանա-  
ւորս . յԲ գլ . դատաստանացն , գրեալ  
“ Լիքատեսցի . . . զի ապաշխարութեան  
“ հասանիցէ եւ մի կորիցէ յանգելց  
“ չարին , ( այսինքն , պատժեսցի զի  
ապաշխարեսցէ , և մի կորիցէ ’ի չարիս  
անդ յոր անկաւն ), ’ի նելքոյ ե- դ բա-  
ռից փոխագրութեամբ եղեալ է և ոչ ,  
առանց զվերինն եղծանելց . իսկ գաղա-  
փարողացն կարծելով զ’ և ո՞ն մուծանե-  
լի ’ի ստորին տողն , այսպէս գրեն , այլայ-  
լով զիմաստ բանիցն . ոմն . “ Եւ մի  
“ կորիցէ չարին յանկ ոչ ելելց , . այլ  
օրին . “ Եւ մի կորիցէ չարին ոչ յանգ  
“ ելեալ , . և այլ օրին . “ Կակ եթէ  
“ չարն ’ի զլուխ ելեալ իցէ , մահու  
“ մեռցի , . Ո իտ զիր . և ո՞ն՝ զյանգելց  
( որ է յանկելց ) տուեալ է կարծել  
յանգելց ( այսինքն վճարելց ), վասն  
որոյ և այլք . գրեն բառիւ և ընդունե-  
լութեամբ յանգ էլլու . և յանգելո՞ն՝ հա-  
մարձակեցուցեալ է գրել ’ի գլուխ էլլու :  
յԲ գլ . Կախադրութեանցն . “ Ակիզըն  
“ առնել այսմ իրողութեան , այսպիսի  
“ եղեւ . ’ի լուսանցսն յաւելեալ է  
“ Շնորհիւ տեառն , . որ ակնարկէ ’ի  
սկիզբն առնել գործոյն . իսկ այլ օրին .  
զյաւելուածն ստորափոխեալ են այս-  
պէս . “ Ակիզըն առնել այսմ իրողութե-  
“ այսպիսի եղեւ . Հանդիպեցաք շնորհիւ-  
“ առանց առաջի տէր Ատեփաննոսի , .  
որպէս թէ հանդիպումնն ’ի Ատեփա-  
նոս՝ լեալ իցէ շնորհիւ տեառն : — Ա Մ Բ  
գլ . “ Եւ ոմանք զԱկիային ախտն ախ-  
“ տանան . և ըստ իւրաքանչիւր կամաց ,  
“ և ըստ իւրաքանչիւր բաժա-  
“ նեն , . այսպէս զառաջինն դատարկ

տարկ թողեալէ զտեղին 'ի գիւտ պատշաճագոյն բառի . ապա զրեալէ օտար զրչաւ՝ վրդ . անծանօթ է մեզ ձայնս , եթէ շիցէ սրտի ընթեռնի . իսկ այլօրինակք պէսպէս զրեն . երեքն դրդ , երկուքն որդ , մին Քրդ : Արովյայտ է զի ամենեցուն ևս սոցա առաջին օրինակ առեալէ 'ի մերոյն . այլոչ ուրուք հասեալ մնաց , վրդ բառի , վասն որոյ և ըստ կամ յեղյեղեալ :

Աչ ումեք կարծեմ յետ այսպիսեաց ապացուցական բանից ունել տեղի երկբայելց ընդ հարազատութիւն մատենիս , լինելիսկագիր և նախագաղափար

օրինակ գործոցն և հեղինակին , այլ բաղձալ տպագրութեան մատենին , զորիցէ թէ առատաձեռնէր ոգի հայասէր՝ թէ ոչ զբոլոր՝ գէթ մասամբ՝ նմանագիր բնագրին կամ պատկերօրէն նմանատիպ հանել և ընծայել 'ի վայելս և 'ի սիրագործութիւն բանասիրաց և հայրենասահրաց որդուոց Ծնորգոմայ , և սրտից երախտապարտից՝ առ այսպիսիս իւրեանց նախնիս , քաջիմաստոս և անմահական անուան արժանաւորս :

Հ . Դ . Մ

### ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆ

#### ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԱՑ ԵՒ ԳՈՒՐԳԵՆԻ

Արք յաւաղին թաւալագլոր բուռնիք մարտնչիք ընդդիմակք կայք ընդ իս 'ի յասպարէզ ամբիծ սիրոյն մրցողաց .

Ծնչին դափնի միոյն 'ի ձէնջ է լոկ յածախ մրցանակ .

Վմենեցուն աստ անխըստիր անմահութիւն պարզեի : —

Բզհարազատ քրիստոսակրօն երկուց եղբարց առից երգ : —

Դաւիթ , Դուրգէն սիրաբողընք և հարազատք երկորին ,

Համբակ 'ի տիս նուէր Ծիսուսի զանձինս ածել տենչային ,

Ակստ 'ի սրտի մնչեն հաստատ վասն Ծիսուսի մահանալ :

Ռուան մաղթանիք ձեր , ողջակէզք 'ի սեղանի սուրբ սիրոյն .

Ծա հասթիք վաղվաղակի փափագանացդ 'ի կատար ,

Ծա հրաման իսիստ ելանէ քրիստոնէից հալածող ,

Ծա զան անգութ դահիճք կապէլ ըզձեռս երկոցունդ :

Շակատք պայծառ շողան նորհօք իբր ոսկեքդանց ամպ գարնան ,

Ծնմեղութիւն զիւրն ըսպիտակ տարածանէ քօղ 'ի դէմն .

Դընան խոնարհք դատաւորին իւրեանց հանդէպ յանդիման .

Դյապէս անմեղ տատրակք երկու վառք ըզմիմեամբ սրտակաթ ,

Դնոյն ոստոյ թըռիչս առեալ հեղիկ մնչեն ընդ ուղին : —

Ծնագորոյն դատաւորին սիրաբն շարժի 'ի գորով ,

Հայի ընդ դէմն պատանեկացն և արձակել տայ զկապանս .

— “ Ատիքը առ իս , ով որդեակք իմ , գողտըր բանիւ բարբառի ,

“ Ո՞ր անգութ մըզէ զձեզ յայս զոհել զանձինս յարբունս ամաց .

Օ իարդ քաղցր համարիցիք ըզմահուն դառըն տանջանս , ” :

— Արկնեն նոքա համաբարբառ . “ Այէք ըզմիսուս կամիմք մեք , ” :

— Եւ գրթութիւն ոչ բարբառի , բարէ , 'ի սիրտ ձեր տակաւ ,

Եւ ուստի այս ատելութիւն մուծեալ յոդիս ձեր մանկունս .

Հիմ զաշխարհիս զայս ըզհաճոյս արհամարհէլ յանդգնիք .